# Սերգեյ Դովլաթով

## Ֆերման Լեժեի բաճկոնը

Այս գլուխը՝ պատմություն է արքայազնի ու աղքատի մասին:

Քառասունմեկ թվականի մարտին ծնվեց Անդրյուշա Չերկասովը: Նույն տարվա սեպտեմբերին ծնվեցի ես:
Անդրյուշան երեւելի մարդու որդի էր: Իմ հայրն առանձնանում էր միայն իր նիհարությամբ:
Նիկոլայ Կոնստանտինովիչ Չերկասովը հիանալի արտիստ էր եւ Գերագույն Խորհրդի պատգամավոր: Իմ հայրը՝ շարքային թատերական գործիչ էր եւ բուրժուական ազգայնամոլի որդի:
Չերկասովի տաղանդով հիանում էին Պիտեր Բրուկը, Ֆելինին եւ Դե Սիկան: Իմ հոր տաղանդը նույնիսկ ծնողների կասկածն էր հարուցում:
Չերկասովին գիտեր ողջ երկիրը, որպես արտիստի, պատգամավորի եւ խաղաղության մարտիկի: Իմ հորը գիտեին միայն հարեւանները, որպես խմող ու նյարդային մարդու:
Չերկասովն ուներ ամառանոց, մեքենա, բնակարան եւ փառք: Իմ հայրն ուներ միայն ասթմա:
Նրանց կանայք ընկերություն էին անում: Նույնիսկ, ոնց որ թե, միասին ավարտել էին թատերական ինստիտուտը:
Մայրս շարքային դերասանուհի էր, այնուհետեւ՝ սրբագրիչ եւ ի վերջո՝ թոշակառու: Նինա Չերկասովան նույնպես շարքային դերասանուհի էր:
Ամուսնու մահից հետո նրան թատրոնից վտարեցին:
Անշուշտ, Չերկասովները բարձրագույն սոցիալական խավի ընկերներ ունեին՝ Շոստակովիչը, Մրավինսկին, Էյզենշտեյնը… Իմ ծնողները պատկանում էին

Չերկասովների կենցաղային շրջապատին:
Ողջ կյանքում մենք զգում էինք այդ ընտանիքի հոգածությունն ու հովանավորությունը: Չերկասովը հորս համար երաշխավորագրեր էր գրում: Նրա կինը մորս զգեստներ ու կոշիկներ էր նվիրում:
Իմ ծնողները հաճախ վիճում էին: Հետո նրանք բաժանվեցին: Ընդ որում, բաժանությունը նրանց համատեղ կյանքի համարյա թե միակ խաղաղասիրական գործողությունն էր: Հազվադեպ դեպքերից մեկը, երբ ծնողներս համերաշխ էին գործում:
Չերկասովը զգալիորեն օգնում էր մորս ու ինձ: Օրինակ, նրա շնորհիվ մենք պահպանեցինք բնակտարածքը:
Անդրյուշան իմ առաջին ընկերն էր: Մենք ծանոթացանք տարահանման մեջ: Ավելի ճիշտ, չծանոթացանք, այլ պառկած էինք կողք կողքի, մանկասայլակներում:
Անդրյուշայի սայլակը արտասահմանյան էր: Իմը՝ հայրենական արտադրության:
Սնվում էինք մենք, ես կարծում եմ, նույնքան վատ: Պատերազմ էր:
Հետո պատերազմն ավարտվեց: Մեր ընտանիքները հայտնվեցին Լենինգրադում: Չերկասովներն ապրում էին Կրոնվերկսկյան փողոցի վրա գտնվող կառավարական տանը: Մենք՝ Ռուբինշտեյնի փողոցի վրայի կոմունալկայում:
Անդրյուշան եւ ես բավական հաճախ էինք տեսնվում: Միասին գնում էինք մանկական ցերեկույթների: Տոնում էինք բոլոր ծննդյան օրերը:
Ես մորս հետ գնում էի Կրոնվերկսկյան փողոց տրամվայով: Անդրյուշային բերում էր վարորդը «բուգագտի» ռազմաավարային մեքենայով:
Ես ու Անդրյուշան նույն հասակն ունեինք: Մոտավորապես նույն տարիքի էինք: Երկուսս էլ առողջ ու աշխույժ էինք աճում:
Անդրյուշան, որքան ես հիշում եմ, ավելի համարձակ էր, դյուրագրգիռ, կտրուկ: Ես ֆիզիկապես փոքր-ինչ ավելի ուժեղ էի եւ, ոնց որ թե, մի քիչ ավելի խելամիտ:
Ամեն ամառ մենք ապրում էինք ամառանոցում: Չերկասովները Կարելյան պարանոցի վրա սոճիներով պատված ամառանոց ունեին: Պատուհանից երեւում էր ֆիննական ծոցը, որի վրա թեւածում էին ճայերը: Անդրյուշային հերթական տնային աշխատող էին կցել: Տնային աշխատողները հաճախ փոխվում էին: Որպես կանոն, նրանց գործից ազատում էին գողության համար: Անկեղծ ասած,

նրանց կարելի էր հասկանալ:
Նինա Չերկասովայի մոտ ամենուր արտասահմանյան ապրանքներ էին շաղ տված: Բոլոր դարակները լեցուն էին օծանելիքով եւ կոսմետիկայով: Զահել տնային աշխատողներին դա գրգռում էր: Նկատելով հերթական կորուստը՝ Նինա Չերկասովան հոնքերը կիտում էր.
– Լյուբաշան անկարգություն է անում:
Հաջորդ օրը Լյուբաշային փոխարինում էր Զինուլյան…
Ես Լուիզա Հենրիխովնա գերմանուհի դայակ ունեի: Որպես գերմանուհու՝ նրան ձերբակալություն էր սպառնում: Լուիզա Հենրիխովնան մեզ մոտ էր թաքնվում: Այսինքն՝ պարզապես մեզ հետ ապրում էր: Ով դրա հետ մեկտեղ՝ իրագործում էր իմ դաստիարակությունը: Մենք, կարծես թե, նրան ոչինչ չէինք վճարում:
Մի ժամանակ ես ապրում էի Չերկասովների ամառանոցում, Լուիզա Հենրիխովնայի հետ: Հետո ահա թե ինչ տեղի ունեցավ: Լուիզա Հենրիխովնան տրոմբոֆլեբիտ ուներ: Եվ ահա մի ծանոթ կաթնավաճառուհի նրան խորհուրդ տվեց ոտքերին քաք քսել: Իբր էդպիսի ժողովրդական միջոց կա:
Ի դժբախտություն շրջապատողների, այդ միջոցն օգնեց: Մինչեւ ձերբակալությունը Լուիզա Հենրիխովնան անտանելի հոտ էր տարածում: Մենք դա, իհարկե, հանդուրժում էինք, բայց Չերկասովները ավելի նրբաճաշակ դուրս եկան: Մայրիկին ասվել էր, որ Լուիզա Հենրիխովնայի ներկայությունը ցանկալի չէ:
Դրանից հետո մայրս տուն վարձեց: Ընդ որում, նույն փողոցի վրա, գյուղական տներից մեկում: Մենք դայակիս հետ ամեն ամառ այնտեղ էինք բնակվում: Ընդհուպ մինչեւ նրա ձերբակալությունը:
Առավոտյան ես գնում էի Անդրյուշայի մոտ: Մենք վազում էինք հողամասով, հաղարճ էինք ուտում, սեղանի թենիս էինք խաղում, բզեզներ էինք բռնում: Տաք օրերին լողափ էինք գնում: Եթե անձրեւ էր գալիս, պատշգամբում պլաստիլինով քանդակներ էինք անում:
Երբեմն գալիս էին Անդրյուշայի ծնողները: Մայրը՝ համարյա ամեն կիրակի: Հայրը՝ ամառվա ընթացքում մի չորս անգամ, քունն առնելու:
Իրենք՝ Չերկասովներն, ինձ լավ էին վերաբերվում, իսկ ահա տնային աշխատավորուհիները՝ ավելի վատ: Չէ՞ որ ես լրացուցիչ ծանրաբեռնություն էի: Ընդ որում, առանց լրացուցիչ վճարման:
Այդ պատճառով Անդրյուշային թույլատրվում էր չարություն անել, իսկ ինձ՝ ոչ:

Ավելի ճիշտ, Անդրյուշայի չարությունները բնական էին թվում, իսկ իմը՝ ոչ այնքան: Ինձ ասում էին. «Դու ավելի խելոք ես: Դու պետք է Անդրյուշային օրինակ ծառայես…»: Այդպիսով, ես ամռան ընթացքում վերածվում էի տնային դաստիարակի:
Ես անհավասարություն էի զգում: Թեեւ Անդրյուշայի վրա ավելի հաճախ էին ձայն բարձրացնում: Նրան ավելի խիստ էին պատժում: Իսկ ինձ անընդհատ նրան օրինակ էին բերում:
Եվ, այդուհանդերձ, ես վիրավորանք էի զգում: Անդրյուշան գլխավորն էր: Սպասավորները վախենում էին նրանից հանց տանտիրոջից: Իսկ ես, այսպես ասած, հասարակներից էի: Եվ չնայած տնային տնտեսուհին ավելի հասարակ էր, բայց նա ակնհայտորեն ինձ չէր սիրում:
Տեսականորեն ամեն ինչ այլ կերպ պիտի լիներ: Տնային աշխատողը պիտի որ սիրեր ինձ: Սիրեր որպես սոցիալապես ավելի մերձ կանգնածի: Համակրեր ինձ որպես տարատոհմիկի: Իրականում ծառաները սիրում են ատելի տերերին առավել շատ, քան թվում է: Եվ, իհարկե, շատ ավելի, քան իրենց:
Նինա Չերկասովան ինտելիգենտ, խելացի, լավ դաստիարակված կին էր: Անշուշտ, նա թույլ չէր տա նվաստացնել իր ընկերուհու վեց տարեկան տղային: Եթե Անդրյուշան խնձոր էր վերցնում, ինձ նույնպես հասնում էր նույնից: Եթե Անդրյուշան կինո էր գնում, երկուսիս համար էլ տոմս էին գնում:
Ինչպես ես հիմա եմ հասկանում, Նինա Չերկասովան ուներ հարուստների բոլոր արժանիքներն ու թերությունները: Նա անվեհեր էր, հաստատակամ, նպատակասլաց: Դրա հետ մեկտեղ՝ պաղ, գոռոզամիտ եւ ազնվականորեն միամիտ: Օրինակ, նա փողը համարում էր ծանր բեռ: Նա մորս ասում էր.
– Դու ինչ երջանիկ ես, Նորա: Քո Սերյոժկային իրիս ես երկարում, նա գոհ է: Իսկ իմ դմբլոն միայն շոկոլադ է սիրում…
Իհարկե, ես էլ էի շոկոլադ սիրում: Բայց ձեւացնում էի, թե գերադասում եմ իրիսը:
Ես չեմ ափսոսում ապրածս աղքատության համար: Եթե Հեմինգուեյին հավատանք, աղքատությունը՝ գրողի համար անփոխարինելի դպրոց է: Չքավորությունը մարդուն սրատես է դարձնում: Եվ այդպես շարունակ: Հետաքրքիր է, որ Հեմինգուեյը դա հասկացավ, հենց որ հարստացավ:
Յոթ տարեկանում ես վստահեցնում էի մորս, որ ատում եմ մրգերը: Տասը տարեկանի մոտ հրաժարվում էի խանութում փորձել ճիտքակոշիկները:

Տասնմեկում՝ սիրեցի կարդալը: Տասնվեցում սովորեցի փող աշխատել: Մինչեւ տասնվեց տարեկանը Անդրյուշա Չերկասովի հետ սերտ հարաբերությունների մեջ էի: Նա ավարտում էր անգլիական դպրոցը: Ես՝ սովորականը: Նա մաթեմատիկա էր սիրում: Ես գերադասում էի պակաս ճշգրիտ գիտությունները: Մենք երկուսս էլ, ի դեպ, կարգին ծույլ էինք:
Մենք բավական հաճախ էինք հանդիպում: Անգլիական դպրոցը մեր տնից մի հինգ րոպե քայլելու ճամփա էր: Պատահում էր, Անդրեյն էր պարապմունքներից հետո անցնում մեզ մոտ: Դե ես էլ, պատահում էր, գնում էի նրա մոտ գունավոր հեռուստացույց նայելու: Անդրեյը ինֆանտիլ էր, ցրված, բարեհամբուրությամբ լեցուն: Ես դեռ այն ժամանակ չար էի եւ մարդկային թուլությունների հանդեպ ուշադիր:
Դպրոցական տարիներին մեզանից յուրաքանչյուրի մոտ ընկերներ հայտնվեցին: Ընդ որում, ամեն մեկի մոտ՝ իրենը: Իմ ընկերների մեջ գերակայում էին քրեական տիպի պատանիները: Անդրեյին հրապուրում էին լավ ընտանիքների տղաները: Ուրեմն, մարքս-լենինյան ուսմունքի մեջ ինչ-որ բան կա: Երեւի սոցիալական բնազդներն ապրում են մարդու մեջ: Ողջ գիտակցական կյանքում ինձ բնազդաբար ձգել են թերարժեք մարդիկ՝ չքավորները, խուլիգանները, սկսնակ բանաստեղծները: Հազար անգամ ես կարգին ծանոթություններ եմ հաստատել, եւ ամեն ինչ՝ ապարդյուն: Միայն վայրենիների, շիզոֆրենիկների եւ տականքների շրջապատում էի ես ինձ լավ զգում:
Կարգին ծանոթներն ինձ ասում էին.
– Մի նեղացիր, դու քո շուրջը ահավոր անհանգստություն ես տարածում: Քո կողքին զանազան կոմպլեքսներով ես վարակվում…
Ես չէի նեղանում: Ես տասներկու տարեկանից զգում էի, որ ինձ անկասելիորեն ձգում են տականքները: Զարմանալի չէ, որ իմ դպրոցական ծանոթներից յոթը հետագայում ճամբարներով անցան:
Կարմրահեր Բորիս Իվանովը նստեց թերթավոր երկաթի գողության համար: Ծանրամարտիկ Կոնոնենկոն մորթել էր կողակցուհուն: Դպրոցի հավաքարարի տղա Միշա Խամրաեւը առեւանգել էր ճանապարհային վագոն-ռեստորանը: Երբեմնի ավիամոդելիստ Լետյագոն խուլուհամրի էր բռնաբարել: Ալիկ Բրիկինը, ով ինձ ծխել էր սովորեցրել, ծանր ռազմական հանցանք էր գործել՝ սպայի էր ծեծել: Խրյապա մականունով Յուրա Գոլինչիկը վիրավորել էր ոստիկանական ձիուն: Եվ նույնիսկ դասարանի ավագ Վիլյա Ռիվկովիչը

հաջողացրեց մի տարի նստել դեղահաբերի վաճառքի համար:
Իմ ընկերները Անդրյուշա Չերկասովին տագնապ ու անհանգստություն էին հարուցում: Նրանցից յուրաքանչյուրին մշտապես ինչ-որ բան սպառնում էր: Նրանք բոլորն ընդունում էին ինքնահաստատման միակ ձեւը՝ կոնֆրոնտացիան: Իսկ ինձ նրա ընկերները անվստահություն ու թախիծ էին ներշնչում: Նրանք բոլորն ազնիվ էին, խելամիտ ու բարեհամբույր: Բոլորը գերադասում էին փոխզիջումը, եւ ոչ՝ մենամարտը:
Մենք երկուսս էլ համեմատաբար շուտ ամուսնացանք: Ես, բնականաբար, աղքատ աղջկա հետ: Անդրեյը՝ Դաշայի, քիմիկոս Իգնատեւի թոռնուհու, ով հավելեց ընտանեկան բարեկեցությունը:

Հիշում եմ, ես կարդացել եմ հակոտնյաների փոխադարձ ձգողականության մասին: Ըստ իս, այդ տեսության մեջ ինչ-որ կասկածելի բան կա: Կամ էլ, համենայն դեպս, վիճելի: Օրինակ, Դաշան ու Անդրեյը նման էին: Երկուսն էլ՝ բարձրահասակ, գեղեցիկ, բարեհամբույր ու գործնական: Երկուսն էլ ամենից շատ գնահատում էին հանգստությունն ու կարգ ու կանոնը: Երկուսն էլ ապրում էին ճաշակով ու առանց խնդիրների:

Դե, ես ու Լենան էլ նման էինք: Երկուսս էլ՝ քրոնիկական ձախորդներ: Երկուսս էլ՝ իրականության հետ բախման մեջ: Նույնիսկ Արեւմուտքում հաջողացնում ենք ապրել առանց կանոնների…

Մի անգամ Անդրյուշան ու Դարյան մեզ հյուր կանչեցին: Գալիս ենք Կրոնվերկսկի փողոց: Մուտքում միլիցիոներ է նստած: Վերցնում է լսափողը.

– Անդրեյ Նիկոլաեւիչ, ձեզ մոտ:

Իսկ այնուհետեւ, դեմքի արտահայտությունը փոքր-ինչ խստացնելով.

– Անցեք…

Վերելակով բարձրանում ենք: Մտնում ենք:

Միջանցքում Դաշան շշնջաց.

– Կներեք, մեզ մոտ բուժքույր է:

Ես սկզբում չհասկացա: Ես կարծեցի, երեւի թե ծնողներից մեկն է վատացել: Ինձ նույնիսկ թվաց, որ պետք է գնալ:

Մեզ բացատրեցին.
– Գենա Լավրենտեւն է բուժքրոջը բերել: Դա սարսափ է: Աղջիկը սովետական ոչխարամուշտակով էր: Չորրորդ անգամ հարցնում է, թե պարեր լինելո՞ւ են: Հենց նոր մի ամբողջ շիշ սառը գարեջուր խմեց… Աստծո սիրույն, մի բարկացեք…
– Ոչինչ,- ասում եմ,- մենք սովոր ենք…
Ես այն ժամանակ աշխատում էի գործարանային բազմատիրաժում: Կինս կանացի վարսավիր էր: Մեզ հազիվ թե ինչ-որ բան ունակ էր շփոթեցնելու:

Իսկ բուժքրոջը ես հետո զննեցի: Նա գեղեցիկ ձեռքեր ուներ, բարալիկ կոճեր, կանաչ աչքեր եւ շողշողուն ճակատ: Նա ինձ դուր եկավ: Նա շատ էր ուտում, եւ նույնիսկ սեղանի շուրջ աննկատ պարպրում էր:

Նրա ուղեկիցը՝ Լավրենտեւը, ավելի վատ տեսք ուներ: Նա փարթամ մազերով էր եւ մանր դիմագծերով՝ նողկալի համադրություն: Բացի այդ, նա ինձ ձանձրացրեց: Չափազանց երկար էր պատմում Ռումինիա կատարած ուղեւորության մասին: Ես, կարծես թե, նրան ասացի, որ Ռումինիան ինձ համար ատելի է…

Տարիներն անցնում էին: Ես ու Անդրեյը բավական հազվադեպ էինք հանդիպում: Տարեցտարի ավելի հազվադեպ:

Մենք չէինք վիճել: Փոխադարձ հիասթափություն չէինք ապրել: Մենք պարզապես բաժանվել էինք:

Այդ ընթացքում ես արդեն ինչ-որ բաներ էի գրում: Անդրեյն ավարտում էր իր թեկնածուական դիսերտացիան:

Նրան շրջապատում էին ուրախ, բարեհամբույր ֆիզիկոսները: Ինձ՝ խենթուխելառ, կեղտոտ, հավակնոտ լիրիկները: Նրա ծանոթները երբեմն

շամպայնի հետ կոնյակ էին ըմպում: Իմոնք՝ սիստեմատիկ վարդագույն պորտվեյն էին գործածում: Նրա ընկերներն իրենց շրջապատում Գումիլյով ու Բրոդսկի էին արտասանում: Մերոնք կարդում էին բացառապես իրենց ստեղծագործությունները:

Շուտով մահացավ Նիկոլայ Կոնստանտինովիչ Չերկասովը: Պուշկինյան թատրոնի մոտ միտինգ տեղի ունեցավ: Այնքան ժողովուրդ կար, որ փողոցային երթեւեկությունը կանգ էր առել:

Չերկասովը ժողովրդական դերասան էր: Եվ ոչ միայն կոչումով: Նրան սիրում էին պրոֆեսորներն ու գյուղացիները, գեներալներն ու հանցագործները: Այդպիսի փառք ունեին Եսենինը, Զոշչենկոն եւ Վիսոցկին:

Մեկ տարի անց Նինա Չերկասովային թատրոնից հեռացրին: Հետո ետ վերցրին նրա ամուսնու բոլոր մրցանակները: Ստիպեցին վերադարձնել միջազգային պարգեւները, որոնք Չերկասովը ստացել էր Եվրոպայում: Դրանց մեջ ոսկուց թանկարժեք իրեր կային: Ղեկավարությունը ստիպեց այրուն դրանք փոխանցել թատերական թանգարանին:

Այրին, իհարկե, կարիքի մեջ չէր: Նա ուներ ամառանոց, մեքենա, բնակարան: Բացի այդ, նա խնայումներ ուներ: Անդրեյն ու Դաշան աշխատում էին:

Մայրս երբեմն այցելում էր այրուն: Ժամերով նրա հետ հեռախոսով խոսում էր: Նա բողոքում էր որդուց: Ասում էր, որ անուշադիր է եւ եսասեր:

Մայրս հոգոց էր հանում.

– Քոնը գոնե չի խմում…

Կարճ ասած, մեր մայրերը վերածվել էին միանման թախծոտ ու սրտառուչ պառվուկների: Իսկ մենք՝ միանման չորուկ ու անուշադիր որդիների: Թեեւ Անդրյուշան հաջողակ ֆիզիկոս էր, իսկ ես՝ այլախոհ քնարերգու:

Մեր մայրերը նմանվել էին միմյանց: Սակայն ոչ ամբողջովին: Իմը համարյա տնից դուրս չէր գալիս: Նինա Չերկասովան լինում էր բոլոր ներկայացումներին:

Դրանից զատ, նա պատրաստվում էր Փարիզ մեկնելու:

Նա նախկինում էլ էր արտասահմանում եղել: Եվ ահա հիմա նա կամենում էր այցելել հին ընկերներին:

Ինչ-որ տարօրինակ բան էր կատարվում: Քանի դեռ Չերկասովը ողջ էր, տանն ամեն օր հյուրեր էին նստած: Դրանք հայտնի, տաղանդավոր մարդիկ էին՝ Մրավինսկին, Ռայկինը, Շոստակովիչը: Նրանք բոլորը ընտանիքի ընկերներն էին թվում: Նիկոլայ Կոնստանտինովիչի մահից հետո պարզվեց, որ դա նրա անձնական ընկերներն էին:

Մի խոսքով, սովետական երեւելիները ինչ-որ տեղ կորել էին: Մնացել էին արտասահմանյանները՝ Սարտրը, Իվ Մոնտանը, նկարիչ Լեժեի այրին: Եվ Նինա Չերկասովան որոշեց նորից գնալ Ֆրանսիա:

Նրա գնալուց մի շաբաթ առաջ մենք պատահաբար հանդիպեցինք: Ես նստած էի Ժուռնալիստների տան գրադարանում, խմբագրում էի տունդրան նվաճողներից մեկի հուշագրությունները: Այդ հուշերի տասնչորս գլուխներից ինը միակերպ էին սկսվում. «Եթե առանց կեղծ համեստության ասենք…»: Բացի այդ, ես պարտավոր էի ստուգել լենինյան մեջբերումները:

Եվ մեկ էլ մտնում է Նինա Չերկասովան: Ես նույնիսկ չգիտեի, որ մենք նույն գրադարանից ենք օգտվում:

Նա ծերացել էր: Հագնված էր, ինչպես միշտ, աննկատ, մտածված շքեղությամբ:

Մենք բարեւեցինք միմյանց: Նա հարցրեց.

– Ասում են, դու գրո՞ղ ես դարձել:

Ես շփոթվեցի: Ես պատրաստ չէր այդպիսի հարցադրմանը: Ավելի լավ կլիներ նա հարցներ. «Դու հանճա՞ր ես»: Ես կպատասխանեի հանգիստ եւ դրականորեն: Բոլոր իմ ընկերները պարտասում էին հանճարեղության բեռի տակ: Նրանք բոլորն իրենց հանճար էին կոչում: Իսկ ահա քեզ գրող կոչելը, պարզվում է, ավելի դժվար է:

Ես ասացի.

– Գրում եմ ինչ-որ բան, ժամանցի համար…

Ընթերցասրահում երկու այցելու կար: Երկուսն էլ մեր կողմն էին նայում: Ոչ այն պատճառով, որ ճանաչել էին Չերկասովի այրուն: Ավելի շուտ, զգում էին ֆրանսիական օծանելիքի բույրը:

Նա ասաց.

– Գիտես, ես վաղուց ուզում եմ գրել Կոլյայի մասին: Ինչ-որ հուշերի պես մի բան:

– Գրեք:

– Վախենամ, թե ես տաղանդ չունեմ: Թեպետ բոլոր մեր ծանոթներին դուր էին գալիս իմ նամակները:

– Դե դուք էլ երկար նամակ գրեք:

– Ամենադժվարը սկսելն է: Իրոք, այդ ամենն ինչի՞ց սկսվեց: Գուցե դա սկսվեց մեր ծանոթության օրի՞ց: Թե՞ շատ ավելի վաղ:

– Իսկ դուք այդպես էլ գրեք:

– Ինչպե՞ս:

– «Ամենադժվարը՝ սկսելն է: Իսկապես, ինչի՞ց այս ամենը սկսվեց…

– Հասկացիր, Կոլյան իմ ողջ կյանքն էր: Նա իմ ընկերն էր: Նա իմ ուսուցիչն էր… Ի՞նչ ես կարծում, դա մեղք է՝ ամուսնուն որդուց շատ սիրելը:

– Ես չգիտեմ: Ես կարծում եմ՝ սերն ընդհանրապես չափ չունի: Կա միայն՝ այո կամ ոչ:

– Դու ակնհայտորեն խելոքացել ես,- ասաց նա:

Հետո մենք զրուցում էինք գրականության մասին: Ես կարող էի, առանց հարցնելու, գուշակել նրա կուռքերին՝ Պրուստ, Գոլսուորսի, Ֆեյխտվանգեր… Պարզվեց, որ նա սիրում է Պաստեռնակին ու Ցվետաեւային:

Այդժամ ես ասացի, որ Պաստեռնակին չէր բավում ճաշակը: Իսկ Ցվետաեւան, իր ողջ հանճարեղությամբ հանդերձ, կլինիկական ապուշ էր…

Հետո մենք անցանք գեղանկարչությանը: Ես համոզված էի, որ նա հիացած է իմպրեսիոնիստներով: Եվ չսխալվեցի:

Այդժամ ես ասացի, որ իմպրեսիոնիստները ակնթարթայինը գերադասում էին հավերժականից: Եվ միայն Մոնեի մոտ տոհմային միտումները գերակշռում էին տեսակայինների վրա…

Չերկասովան տրտում հոգոց հանեց.

– Ինձ թվում էր, թե դու խելոքացել ես…

Մենք մեկ ժամից ավելի զրուցեցինք: Հետո նա հաջողություն ասաց եւ դուրս եկավ: Ես արդեն չէի ուզում խմբագրել տունդրան նվաճողի հուշերը: Ես մտածում էի հարստության եւ աղքատության մասին: Խղճուկ եւ վիրավոր մարդկային հոգու մասին…

Մի ժամանակ ես ծառայել եմ պահակախմբում: Կալանավորների մեջ պատահում էին երեւելի անվանակարգային աշխատողներ: Առաջին օրերին նրանք պահպանում էին ղեկավարող վարվելաեղանակը: Հետո օրգանապես ձուլվում էին ճամբարային զանգվածին:

Մի ժամանակ ես օկուպացված Ֆրանսիայի մասին վավերագրական մի ֆիլմ էի տեսել: Փողոցներով գնում էին գաղթականների ամբոխները: Ես համոզվեցի, որ ստրկացված երկրները միեւնույն տեսքն ունեն: Բոլոր սնանկացած ժողովուրդները՝ զույգ են…

Ակնթարթաբար մարդուց վայր է թափվում հանգստության եւ հարստության թեփուկը: Մեկեն մերկանում է նրա վիրավոր, որբ հոգին…

Անցավ մի երեք շաբաթ: Հեռախոսազանգ հնչեց: Չերկասովան վերադարձել էր Փարիզից: Ասաց, որ կանցնի:

Մենք հալվա ու թխվածք առանք:

Նա ավելի ջահելացած ու փոքր-ինչ խորհրդավոր տեսք ուներ: Ֆրանսիացի երեւելիները մերոնցից շատ ավելի վեհանձն էին գտնվել: Նրան լավ էին ընդունել:

Մայրս հարցրեց.

– Փարիզում ո՞նց են հագնվում:

Նինա Չերկասովան պատասխանեց.

– Այնպես, ինչպես հարկ են համարում:

Հետո նա պատմում էր Սարտրի եւ նրա աներեւակայելի արարքների մասին: «Սոլե» թատրոնի փորձերի մասին: Իվ Մոնտանի ընտանեկան գժտությունների մասին:

Նա մեզ նվերներ ընծայեց: Մորս՝ նրբագեղ թատերական պայուսակ: Լենային՝ կոսմետիկական հավաքածու: Ինձ բաժին հասավ մի հին վելվետե բաճկոն:

Անկեղծ ասած, ես փոքր-ինչ շվարած էի: Բաճկոնն ակնհայտորեն քիմմաքրման ու վերանորոգման կարիք ուներ: Թեւքերը փայլում էին: Կոճակները պակասում էին: Օձիքի եւ թեւքի վրա յուղաներկի հետքեր նկատեցի:

Ես նույնիսկ մտածեցի՝ ավելի լավ էր ինքնահոս բերեր: Բայց բարձրաձայն ասացի.

– Շնորհակալություն: Զուր եք անհանգստացել:

Ես հո չէի՞ կարող գոչել. «Ձեզ որտե՞ղ է հաջողվել այսպիսի հնոտի գտնել»:

Իսկ բաճկոնն, իրոք որ, հին էր: Այդպիսի բաճկոնները, եթե հավատալու լինենք սովետական պլակատներին, հագնում են ամերիկացի գործազուրկները:

Չերկասովան ինչ-որ տարօրինակ կերպով նայեց ինձ եւ ասաց.

– Սա Ֆերնան Լեժեի բաճկոնն է: Նա մոտավորապես քո կազմվածքն ուներ:

Ես զարմացած հարցրի.

– Լեժե՞ն: Հենց նա՞:

– Մի ժամանակ մենք նրա հետ շատ մտերիմ էինք: Հետո ես ընկերություն էի անում նրա այրու հետ: Նրան պատմեցի քո գոյության մասին: Նաղյան խցկվեց պահարանի մեջ: Հանեց այս բաճկոնն ու երկարեց ինձ: Նա ասում է, որ Ֆերնանը կտակել է իրեն լինել ամենայն խուժանի ընկերը…

Ես հագա բաճկոնը: Այն ինձ վրա լավ էր նստում: Այն կարելի էր հագնել տաք սվիտրի վրայից: Դա աշնանային կարճ վերարկուի պես մի բան էր:

Նինա Չերկասովան մինչեւ տասնմեկը նստեց մեզ մոտ: Հետո նա տաքսի պատվիրեց:

Ես երկար զննում էի յուղաներկի բծերը: Հիմա ես ափսոսում էի, որ դրանք քիչ են: Միայն երկուսը՝ թեւքի ու օձիքի վրա:

Ես սկսեցի հիշել, թե ի՞նչ է ինձ հայտնի Ֆերնան Լեժեի մասին:

Դա մի բարձրահասակ, ուժեղ մարդ էր, նորմանդացի, գեղջուկներից: Տասնհինգ թվին ուղեւորվել էր ճակատ: Այնտեղ պատահել էր, որ նա հացը արյունով կեղտոտված սվինով էր կտրել: Լեժեի ճակատային գծանկարները սարսափով էին համակված:

Հետագայում նա Մայակովսկու նման, արվեստով մարտնչում էր: Բայց Մայակովսկին ինքնասպան եղավ, իսկ Լեժեն դիմացավ ու հաղթեց:

Նա երազում էր նկարել շենքերի ու վագոնների պատերին: Կես դար հետո նրա երազանքն իրականացրեց ամերիկյան թափթփուկը:

Նրան թվում էր, որ գիծը գույնից կարեւոր է: Որ արվեստը Շեքսպիրից մինչեւ Էդիթ Պիաֆ, ապրում է հակադրություններով:

Նրա սիրելի խոսքերն են.

«Ռենուարը պատկերում էր այն, ինչ տեսնում էր: Ես պատկերում եմ այն, ինչ հասկացել եմ…»:

Լեժեն կոմունիստ մեռավ, մեկընդմիշտ հավատալով մեծագույն, աննախադեպ խաբեբայությանը: Բացառված չէ, որ, ինչպես եւ շատ արվեստագետներ, նա հիմար էր:

Ես բաճկոնն հագա մոտ ութ տարի: Հագնում էի այն առանձնապես հանդիսավոր դեպքերում: Սակայն վելվետը այդ տարիների ընթացքում այնքան էր մաշվել, որ յուղաներկի հետքերն անհետացել էին:

Այն, որ բաճկոնը պատկանում էր Ֆերնան Լեժեին, քչերը գիտեին: Քչերին էի ես այդ մասին պատմում: Ինձ համար հաճելի էր այդ խղճուկ գաղտնիքը պահելը:

Ժամանակն անցնում էր: Մենք հայտնվեցինք Ամերիկայում: Նինա Չերկասովան մահացավ, մորս կտակելով մեկուկես հազար ռուբլի: Խորհրդային Միությունում դա մեծ փող էր:

Պարզվեց, որ դրանք Նյու Յորքում ստանալը բավական դժվար էր: Դա աներեւակայելի ջանք ու իրարանցում կպահանջեր:

Մենք որոշեցինք այլ կերպ վարվել: Իմ ավագ եղբոր անունով լիազորագիր ձեւակերպեցինք: Բայց դա էլ դժվար ու հոգսաշատ գործ դուրս եկավ: Մի երկու ամիս ես թղթերով էի զբաղված: Դրանցից մեկն անձամբ ստորագրեց միստր Շուլցը:

Օգոստոսին եղբայրս ինձ հաղորդեց, որ փողը ստացված է: Շնորհակալական արտահայտություններ չհետեւեցին: Գուցե, փողը չարժի էլ դրանց:

Եղբայրս երբեմն վաղ առավոտյան զանգում է ինձ: Այսինքն՝ լենինգրադյան ժամանակով՝ ուշ գիշերով: Այդպիսի դեպքերում նրա ձայնը կասկածելի խռպոտ է: Բացի դրանից, կանացի բացականչություններ են հասնում.

– Կոսմետիկայի մասին հարցրու…
Կամ.
– Բացատրի դրան, տխմարին, որ ամենից լավ սպառվում են նորկայատիպ սինթետիկ մուշտակները…
Դրա փոխարեն եղբայրս հարցնում է,
– Դե, ո՞նց են գործերն Ամերիկայում: Ասում են, օղին այնտեղ շուրջօրյա՞ է վաճառվում:
– Կասկածում եմ: Բայց բարերը, բնականաբար, բաց են:
– Իսկ գարեջո՞ւրը:
– Գարեջուրը գիշերային խանութներում ինչքան ուզես:
Հետեւում է հարգալից դադար: Եվ այնուհետեւ,
– Ապրեն կապիտալիստները, գործից հասկանում են:
Ես հարցնում եմ.
– Դու ո՞նց ես:
– Ո տառով,- պատասխանում է,- այսինքն, ոչինչ, լավ:
Սակայն մենք շեղվեցինք: Անդրեյ Չերկասովի գործերը նույնպես լավ են: Ձմռանը նա կդառնա ֆիզիկական գիտությունների դոկտոր: Կամ ֆիզիկա-մաթեմատիկական… Ի՞նչ տարբերություն: